Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սովորողների ստեղծագործ մտածողության զարգացումն անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում

Ուսուցիչ՝

Արմինե Պետրոսյան

Դպրոց՝

Ալ. Շիրվանզադեի անվան համար 21 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1.1 Սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման կարևորությունը ուսուցման գործընթացում.....4

1.2 Սովորողների ստեղծագործ մտածողության զարգացման առանձնահատկությունները.....5

ԳԼՈՒԽ 2. ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ:

2.1 Անգլերենի հաղորդակցական ուսուցման առանձնահատկությունները.....7

2.2 Անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում երեխաների ստեղծագործական մտածողության ձևավորմանն անհրաժեշտ գործոնները.....8

2.3 Ստեղծագործ մտածողության զարգացմանը միտված արդյունավետ առաջադրանքների առավելությունները.....9

2.4 Անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում սովորողների ստեղծարար միտքը զարգացնող առաջադրանքների օրինակներ.....11

ԳԼՈՒԽ 3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՀ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 6-ՐԴ ԴՍՍԱՐԱՆԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ "SEASONS AND WEATHER" ԹԵՄԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ.....15

Եզրակացություն.....18

Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից օտար լեզուների ուսուցման գործընթացում սովորողների լեզվական գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ձևավորվում են նրանց կյանքի հմտությունները՝ ինքնավստահություն, թիմային աշխատանք, համագործակցություն, հանդուրժողականություն, քննական մտածողություն, ստեղծագործական մտածողություն, սովորել սովորել, սոցիալական պատասխանատվություն և այլն: (Ս. Ասատրյան ,2022)

Սովորողի ստեղծագործական մտածողությունը նրան թույլ է տալիս աշխարհին նայել այլ կերպ: Այն թույլ է տալիս նոր մոտեցումներ գտնել խնդիրների լուծման եւ աշխարհի մարտահրավերներին հաջողությամբ դիմակայելու համար: Սա շատ արժեքավոր որակ է, այն «փափուկ հմտություններից» մեկն է, որն այնքան անհրաժեշտ է ժամանակակից աշխարհում հաջողության հասնելու համար:

Սույն հետազոտական աշխատանքում դիտարկվում է սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման հիմնախնդիրը անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ստեղծագործական մտածողությունը 21-րդ դարի կյանքի հմտություններից մեկն է: Ստեղծագործական ունակությունների զարգացումն այսօր անհրաժեշտ է համարվում արդյունավետ լինելու եւ բարձր մակարդակի հասնելու համար: Ժամանակակից կրթությունը պահանջում է փոփոխություն նպատակների, նյութերի, մեթոդների եւ գնահատման մեջ, որպեսզի համապատասխանի տեխնոլոգիաներով պայմանավորված, արագընթաց ժամանակակից կյանքին: Ստեղծագործական մտածողությունը ցանկացած ժողովրդավարական հասարակության մեջ մարդու հաջողակ կարիերայի անքակտելի կողմերից է: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել սովորողների ստեղծագործ մտածողության զարգացումն անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում: Աշխատանքի խնդիրն է ներկայացվող մեթոդների, լեզվանյութի, վարժությունների և գործնական առաջադրանքների միջոցով լուսաբանել ստեղծագործական մտածողության զարգացման առանձնահատկությունները:

Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, 3 գլուխներից, 6 ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1.1 Սովորողների ստեղծագործ մտածողության զարգացման կարյորությունը ուսուցման գործնթացում:

A six-year old pupil in a drawing class said she was

going to draw a picture of God.

The teacher said: ‘But nobody knows what God looks like’.

‘They will, in a minute’, the child replied.

(Chris Kennedy ,March 2015, Birmingham)

2002 թվականին Ամերիկայում ստեղծվել է Partnership for 21st Century Skills (P21.org) ընկերությունը, որի մեջ մտնում էին ԱՄՆ կրթության նախարարության, NEA ազգային կրթական ասոցիացիայի, այլ կառավարական եւ ոչ առևտրայի կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև մի քանի ընկերություններ, այդ թվում Microsoft, Apple, Cisco եւ Dell: Ընկերությունը վերլուծել եւ բացահայտել է 21-րդ դարում հաջողությամբ սովորելու համար անհրաժեշտ հմտությունները և գործածության մեջ դրել 4C-ի գաղափարը՝

- **Քննադատական մտածողություն- Critical Thinking**
- **Ստեղծագործական մտածողություն- Creativity**
- **Հաղորդակցական հմտություն -Communication**
- **Համագործակցային հմտություն -Collaboration**

Ժամանակակից օտար լեզուների ուսուցման գործընթացում սովորողների լեզվական գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ձևավորվում են նրանց մտածելու և սովորելու, ինչպես նաև սոցիալական հմտությունները: ("The Cambridge Life Competences Framework")

• Ստեղծագործականություն

• Քննադատական մտածողություն

• Թվային գրագիտություն

• Սովորել սովորել

• Հաղորդակցություն

• Համագործակցություն

• Հուզական զարգացում

• Սոցիալական պարտականություններ

Ստեղծագործական մտածողությունը հաճախ նկարագրվում է որպես «ստանդարտներից դուրս մտածողություն», որտեղ ի հայտ են գալիս թարմ, յուրօրինակ պատասխաններ, գաղափարներ եւ առարկաներ, խնդիրների լուծման նոր եղանակներ:

Ստեղծագործական մտածողությունը , ինչպես բնորոշվում է հոգեբանական տերմինների բառարանում , մտածողության տեսակ է, որը կապված է ինչ-որ նոր բանի ստեղծման կամ բացահայտման հետ: Դա կարող է լինել օբյեկտ (նկար, վեպ), հմտություն (կիթառ նվագել), կամ գործողություն (հայտնի գործիքի օգտագործում նոր ձեւով):

1.2 Սովորողների ստեղծագործ մտածողության զարգացման առանձնահատկությունները

Լեզվի օգտագործումն արդեն իսկ ստեղծագործական գործողություն է, քանի որ այն ինչ-որ նոր բանի ստեղծումն է (տեքստ, ասույթ եւ այլն) : Մենք մտքերն ու զգացմունքները վերածում ենք բառերի եւ նշանների, որոնք կարելի է տեսնել եւ լսել: Գոյություն ունեցող բառերից մենք ամեն անգամ կառուցում ենք նոր նախադասություններ՝ գործածելով արտահայտությունները նոր ձևով, դրանց մեջ ավելացնելով նոր իմաստներ եւ իմաստային երանգներ:

Ստեղծագործականությունը զարգացնող գործընթացը իրականացնելու համար անհրաժեշտ է՝

- Մասնակից լինել ստեղծագործական գործունեությանը:
- Ստեղծել նոր բովանդակություն՝ որպես հիմք վերցնելով սեփական գաղափարները կամ այլ ռեսուրսներ:
- Բացահայտել և արտահայտել սեփական ինքնությունը եւ զգացմունքները

ստեղծագործական գործունեության միջոցով: ("The Cambridge Life

Competences Framework")

Գաղտնիք չէ, որ որոշ մարդիկ, բնականաբար, ավելի ստեղծագործ են, քան մյուսները, բայց ստեղծագործ մտածողությունը կարելի է զարգացնել: Սա լավ է ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների համար: Ստեղծագործ մտածողության զարգացմանն ուղղված առաջադրանքները միշտ առանձնանում են իրենց յուրահատկությամբ և ուսուցիչներին ու աշակերտներին շատ դրական էմոցիաներ են հաղորդում: Դրանք մեծացնում են անգլերեն սովորելու մղումը: Սովորողները լեզուն օգտագործում են որպես գործիք, ստեղծագործական առաջադրանքը կատարելու համար, այսինքն՝ իր սկզբնական գործառույթով: Սա նրանց նախապատրաստում է անգլերենը նաև դասարանից դուրս օգտագործելուն:

Դիտարկենք ստեղծագործական մտածողության զարգացման դրական կողմերից մի քանիսը՝

- խթանում է հետաքրքրությունն ու մոտիվացիան
- լեզուն սովորելը դարձնում է հաճելի
- երեխաներին տալիս է ներգրավվածության եւ հաջողության զգացում
- նոր բառապաշարի և քերականական նյութի մատուցումն ու ընկալումը դարձնում է ավելի պատկերավոր
- թույլ է տալիս ուսուցչին դիմել այն սովորողների փորձին, ովքեր կարող են ուժեղ լինել այլ ոլորտներում (արվեստ, երաժշտություն կամ պար) եւ օգտագործել այդ ունակությունները՝ աջակցելու իրենց համադասարանցիներին
- թույլ է տալիս երեխաներին մտածել ճկուն
- ապահովում է անհատական մոտեցում
- զարգացնում է այնպիսի հատկություններ, ինչպիսիք են համբերությունը, հաստատակամությունը եւ հնարամտությունը
- խթանում է ապագայում ավելի բարդ, բովանդակահեն եւ վերացական ստեղծագործ մտածողության ձևավորումը
- Օգնում է հաղթահարել այսպես կոչված «լեզվական արգելքները»
- Կարող է հաջողությամբ կիրառվել անգլերենի դասավանդման տարբեր փուլերում:

ԳԼՈՒԽ 2. ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1 Անգլերենի ուսուցման հաղորդակցական մեթոդի առանձնահատկությունները

Անգլերենի դասավանդման մեծ քանակությամբ մեթոդներ կան: Մեթոդի ընտրությունը կախված է աշակերտների տարիքից, ակնկալվող վերջնարդյունքից, ուսուցչի պատրաստվածությունից:

Ամենատարածված մեթոդներից է հաղորդակցականը, որը հայտնվել է քսաներորդ դարի 70 - ականներին Մեծ Բրիտանիայում : 1972 թվականին բրիտանացի լեզվաբան Ուիլկինսը գործածության մեջ է դրել «լեզվի ֆունկցիոնալություն» հասկացությունը, և սա հիմք է դարձել հաղորդակցական մեթոդի հետագա զարգացումների համար:

Այսպիսով, այս մոտեցումը մեծ տարածում է գտել, քանի որ այն ուղղված է իրական հաղորդակցման հմտությունների ձեռք բերմանը:

Միեւնույն ժամանակ, անկաշկանդ խոսքը ոչ միայն հաղորդակցական մեթոդի հիմնական նպատակն է, այլև սովորելու հիմնական միջոցը:

Անգլերենի դասավանդման հաղորդակցական մեթոդի հիմնական սկզբունքներն են՝

- Խոսում ենք առաջին դասից: Մի քանի նոր արտահայտություն, բառ յուրաքանչյուր դասին երաշխիք է, որ որոշ ժամանակ անց աշակերտը կունենա բավարար բառապաշար:
- Օգտագործում ենք ինքնատիպ նյութեր: Անգլերեն լեզվով ֆիլմեր, հեռուստաշոուներ, գրքեր, բառարաններ, որոնք կօգնեն աշակերտին ավելի արագ «զգալ» լեզուն:
- Նմանակում ենք կյանքի իրավիճակները: Լեզուն պետք է օգտակար եւ կիրառելի լինի իրական պայմաններում:
- Ուսուցիչը հանդիսանում է մենթոր , ով ներգրավում, մղում, օգնում է:
- Սխալներ ենք թույլ տալիս եւ եզրակացություններ անում դրանցից:
- Սովորում ենք ոչ միայն խոսել, այլեև ընդհանուր լեզու գտնել:

Կարելի է գործընթացում կիրառվող սկզբունքներից և մեթոդի առանձնահատկություններից եզրակացնել, որ անգլերենի հաղորդակցական ուսուցման

գործնթացի միջոցով անհրաժեշտ է, ինչպես նաև հնարավոր զարգացնել սովորողների ստեղծագործ մտածողությունը:

2.2 Անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում երեխաների ստեղծագործական մտածողության ձյավորմանն անհրաժեշտ գործոնները:

Ստեղծագործական մտածողությունը օտար լեզվի ուսուցանման գործընթացում ինտեգրելով՝ երեխաները զարգացնում են համապատասխան ճանաչողական հմտություններ, ինչպիսիք են դիտարկումը, հարցեր տալը, համեմատելը, հակադրելը, պատկերացնելը եւ կանխատեսելը:

Անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում երեխաների ստեղծագործական մտածողությունը ձևավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ՝

- Ստեղծագործությունը վակուումում տեղի չի ունենում: Միշտ էլ կա մի բան, որը խթանում է մտածողության այս ձևի ձևավորումը, օրինակ՝ գաղափար, նկար, տեքստ, պատմություն, առարկա, հարց կամ խնդիր, կամ դրանց որոշակի համադրություն:
- Ստեղծագործ մտածողությունը ծագում է երեխաների հուզական ներգրավվածությունից:
- Երեխաներին անհրաժեշտ է ստեղծագործական մտածողության հմտությունների զարգացման հիմք: Մոդելը կամ օրինակը ապահովում է անհրաժեշտ լեզվական աջակցություն:
- Ստեղծագործական մտածողությունը ենթադրում է մտքերը ազատ եւ ինքնաբուխ կերպով արտահայտելու ունակություն: Միևնույն ժամանակ, այն ենթադրում է հետաքրքրասիրություն , ուշադրություն մանրուքների նկատմամբ և ջանք: Այս ամենի զարգացումը պետք է ուղեկցվի կոնկրետ ռազմավարությունների եւ հմտությունների զարգացմամբ:

Մանկավարժական գրականության մեջ նշվում է ստեղծագործական մտածողության երկու տեսակ՝ մեծ ստեղծագործականություն՝ մեծ "C" եւ փոքր ստեղծագործականություն ՝փոքր «c» (Craft, 2005): Մեծ «C» օրինակ կարող է լինել բանաստեղծություն, հեքիաթ, պատմություն գրելը անգլերեն լեզվով: Փոքր «c» օրինակ կարող է լինել դասարանում առօրյա թեմաներով երկխոսությունը՝ թեմային առնչվող բառապաշարի կիրառմամբ:

Անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում կարևոր է հնարավորություն տալ զարգացնելու ստեղծագործ մտածողության այս երկու տեսակները:

2.3 Ստեղծագործական մտածողության զարգացմանը միտված առաջադրանքները

Բլումի վերանայված տաքսոնոմիան առանձնացնում է ցածրակարգ մտածողության հմտություններ (lower order thinking skills -LOTS), ինչպիսիք են մտապահումը, ընկալումը և կիրառումը, և բարձր կարգի հմտությունները (higher order thinking skills -HOTS), որոնք սահմանվում են որպես վերլուծություն, գնահատում եւ ստեղծագործություն: LOTS -ը հիմնականում կապված է վերարտադրության, նույնականացման և բազային ընկալման հետ: HOTS- ն ավելի բարդ է և պահանջում է շատ ճանաչողական ջանքեր: LOTS -ի զարգացումը շատ կարևոր է օտար լեզուներ սովորելու գործընթացում, հատկապես վաղ փուլերում: Դասերը, որոնք ներառում են HOTS, ավելի գրավիչ են դարձնում սովորելը: Նրանք նաև զարգացնում են հմտություններ, որոնք կարող են զարգացնել ստեղծագործական մտածողությանը, որն էլ իր հերթին համարվում է մտածողության արտահայտման ամենաբարձր մակարդակը:

Ստեղծագործական մտածողության զարգացման արդյունքում տեղի է ունենում՝

- դրական ինքնագնահատականի ձևավորում

Ստեղծելով սովորողների դրական ինքնագնահատական իրենց անհատական արժանիքների ճանաչման միջոցով, գնահատելով նրանց ներդրումը կրթական գործընթացում, կարևորելով հարգանքը կարծիքների տարբերությունների նկատմամբ , հնարավոր է վերջիններիս ներգրավվել ազատ և ճկուն հաղորդակցման մեջ, ռիսկի դիմելու պատրաստակամություն ձևավորել, որն էլ ստեղծագործական մտածողությունը բնութագրող հատկանիշներից մեկն է:

- հարցերի արդյունավետ կիրառում

Հարցը սովորողներին գրավելու և ստեղծագործական մտածելակերպը հաղորդակցական ուսուցման գործընթացում զարգացնելու գործուն մեթոդ է: Ավանդական Initiation-Response-Feedback (IRF) հարցաշարի սխեման հաճախ գերակշռում է անգլերենի դասերում, սակայն ունի սահմանափակ արժեք:

T: What colour is the car?

P: It’s red.

T: Yes, very good.

Այսպիսի հարցերը ապահովու�մեն սովորողի մասնակցությունը դասապրոցեսին, բայց չեն զարգացնում ստեղծագործ մտածողությունը: Կարևոր է այնպիսի հարցեր տալ, որոնք հետաքրքրում են սովորողներին եւ զարգացնում նրանց ստեղծագործ մտածողությունը : Անհրաժեշտ է սովորողներին տալ բավականաչափ ժամանակ, որպեսզի նրանք մտածեն պատասխանների մասին եւ հնարավորություն ունենալ ձևակերպել իրենց հետաքրքրող հարցերը ուսումնասիրվող թեմայյ շուրջ:

What are they looking at?

What do they see?

What is the Queen pointing at?

How has she prepared for the event?

Հարցերը տարբերակելու, գնահատելու ,պարզից դեպի ավելի բարդը տեղակայելու համար անհրաժեշտ է օգտագործել Բլումի վերանայված տաքսոնոմիան (Anderson and Krathwohl, 2001):

- փոխադարձ կապի հաստատում

Կյանքի տարբեր ոլորտների և ուսումնական առարկաների միջև կապերի գիտակցումը, դասապրոցեսում եւ դրանից դուրս փորձի ձեռք բերումը, տարբեր աղբյուրներից ձեռք բերված գաղափարների կիրառումը ամրապնդում են սովորողների ինքնավստահությունը և զարգացնում ստեղծագործ մտածողուլությունը: Իրերի միջեւ հարաբերությունների եւ դրանց փոխկապակցվածության հաստատումը ստեղծում է գաղափարներ և խթանում ստեղծագործ մտածողությունը:

- հետազոտման խթանում

Առաջադրանքները, որոնց կատարման համար աշակերտները տարբեր տեսանկյունից են նայում առաջադրված խնդրին, խթանում են հետազոտումը եւ զարգացնում ստեղծագործական մտածողությունը:

- ինքնաքննադատական գնահատման ձևավորվում

Ինքնաքննադատության միջոցով սովորողները կարող են գնահատել իրենց ստեղծագործական աշխատանքի վավերականությունն ու արժեքը: Ռեֆլեքսիան, որի մի մասը քննադատական վերլուծությունն է, ի վերջո հանգեցնում է ակտիվ ստեղծագործ մտածողության զարգացմանը:

Հնարավոր է ստացված արդյունքները համեմատել դասերի ավարտին տրված հաջողության չափանիշների հետ:

2.4 Անգլերենի ուսուցման գործընթացում սովորողների ստեղծարար միտքը զարգացնող հաղորդակցական առաջադրանքների օրինակներ

Սույն ենթագլխում մենք կներկայացնենք տարաբնույթ հաղորդակցական առաջադրանքներ, որոնց կանոնավոր և նպատակային կիրառման արդյունքում , կարծում ենք , կզարգանա սովորողների ստեղծագործական միտքը:



Ինքնադրսևորմանը միտված առաջադրանքներ:

Self-Esteem Fan

Յուրաքանչյուր սովորողի տրվում է թղթի կտոր: Անհրաժեշտ է թուղթը ծալել հովհարի պես: Պետք է լինեն այնքան ծալքեր, որքան տառեր կան սովորողի անվան մեջ: Նրանք յուրաքանչյուր ծալքի վերևում գրում են իրենց անվան տառերը: Այնուհետև անվան յուրաքանչյուր տառով սկսվող դրական հատկանիշներ արտահայտող ածականներ են գրում հովհարի վրա: Օրինակ՝ Helena – Hardworking, Enthusiastic, Lively, Energetic, Nice, Active.

Հաջորդիվ սովորողները բացատրում են ածականների ընտրությունը՝ I think I'm hardworking because I always do my homework...

Circle Time

Ստորև բերված առաջադրանքը օգնում է անհատականացնել ուսուցումը, խթանել ապահովության զգացումը, զարգացնել այնպիսի սոցիալական հմտություններ, ինչպիսիք են միմյանց լսելը, համագործակցելը և ուրիշների տեսակետների հանդեպ հարգանք ցուցաբերելը:

Սովորողները նստում կամ կանգնում են շրջանաձև: Նրանք հերթով միմյանց են փոխանցում գնդակ կամ այլ առարկա և ավարտում նախադասությունը: Արտահայտությունը կարող է վերաբերել կարդացած տեքստին, ուսումնասիրվող թեմային, անձնական զգացողություններին և այլն: Օրինակ I like…, I feel happy/ sad/angry when…, I think the story/video/poem is…, I think wild animals are in danger/we need to save water/global warming is worrying because…

Շրջանագծի կանոնները ենթադրում են, որ սովորողը խոսում է միայն այն ժամանակ, երբ իր հերթն է, և անհրաժեշտության դեպքում կարող է ասել «Պաս» կամ օգտագործել իր մայրենի լեզուն: Ուսուցիչը կարող է նշել սովորողների պատասխանները գրատախտակին՝ մտային քարտեզի տեսքով, իսկ հետո օգտագործել այն հետագա աշխատանքի համար:

Question Dice

Հարցեր տալու հմտությունը սովորելու արդյունավետ միջոց է և նաև օգնում է զարգացնել ստեղծագործ մտածողությունը: Հարցեր տալու ունակությունը մարզելու համար կարելի է օգտագործել «հարցերի խորանարդ»_ը: Անհրաժեշտ է հաստ թղթից խորանարդներ պատրաստել եւ յուրաքանչյուր երեսին գրել հարցական բառեր՝ What, Why, When, Where, How, Who: Սովորողները հերթով նետում են խորանարդը եւ հարցեր տալիս մկմյանց՝ օգտագործելով հարցական բառերը: Նման աշխատանքներն

իրականացվում են տեքստեր կարդալուց , թեմատիկ աշխատանքից հետո կամ սովորողներին բանավոր խոսքի մեջ ներգրավելու համար:

Random Association

Այս վարժությունը խրախուսում է սովորողներին կապեր գտնել այնպիսի բաների միջև, որոնք ակնհայտ կապ չունեն: Անհրաժեշտ է գրել այն բառերը, որոնք սովորողները գիտեն փոքրիկ քարտերի վրա և դնել տոպրակի կամ գլխարկի մեջ: Սովորողները հերթով վերցնում են երեք բացիկ եւ կազմում նախադասություն կամ պատմություն, որը կապում է այդ երեք բառերը : Հնարավոր է նաև կատարել նույն գործողությունը փոքր առարկաների միջոցով:

Odd One Out

Նման առաջադրանքներում սովորաբար լինում է մեկ ճիշտ պատասխան՝ լրացուցիչ առարկա, որը սովորողները առանձնացնում են ցանկացած չափանիշով, որը նրանք կարող են գտնել: Վարժությունը կարելի է կատարել 5 խաղաքարով (ոլոռ, ելակ, սեխ, անանուխ եւ խաղող): Սովորողները հերթով բացահայտում են ավելորդը, օրինակ՝ I think that odd subject is the peach as it has a stone…

How Many Ways?

Այս վարժությունը զարգացնում է ճկուն, ստեղծագործական մտածողություն եւ կարող է օգտագործվել աշակերտների բառապաշարը ընդլայնելու համար: Անհրաժեշտ է ընտրել առօրյա իրեր՝ թղթապանակ, պլաստիկ բաժակ, մետաղյա կամ փայտե կախիչ և այլն: Աշխատանքը կատարվում է զույգերով եւ մասնակիցները խոսում են այն բոլոր հնարավոր եղանակների մասին, որոնցով կարող են օգտագործել այս կամ այն իրը: Եթե որոշակի բառեր չգիտեն, բառարանով են աշխատում, իսկ իրենց գաղափարները լուսաբանելու համար կարող են օգտագործել նկարչությունը:

Idea Exploration

Ստեղծագործ մտածողության խթանման համար անհրաժեշտ է պարբերաբար տրամադրել հետազոտությունների առարկա և դրդապատճառներ, փորձարկել տարբեր գաղափարներ: Սա պետք է տեղի ունենա յուրաքանչյուրի կարծիքի նկատմամբ փոխադարձ հարգանքի և արժևորման մթնոլորտում:

Mind Maps



Մտածական քարտեզի ստեղծումը, հիմնված Թոնի Բուսանի (2003) աշխատանքի վրա, թույլ է տալիս վիզուալիզացնել տվյալ հարցի կամ խնդրի մասին մտածելու պրոցեսը: Այս քարտեզները կարող են օգտակար լինել ամբողջ դասարանի հետ համատեղ գաղափարներ գեներացնելու համար:

Անհրաժեշտ է գրատախտակի կենտրոնում գրել թեմայի անունը, օրինակ, «Pets» և պահանջվում է ավելացնել երկու կամ երեք սկզբնական վերնագրեր, որոնք կուղղորդեն սովորողների մտածողությունը, օրինակ, «easy to keep», « difficult to keep»: Յուրաքանչյուր վերնագրի հետ աշխատելիս անհրաժեշտ է գաղափարները ավելացնել քարտեզի վրա: Այնուհետև սովորողները կարող են օգտագործել մտածական քարտեզը, որպեսզի խոսեն իրենց կենդանու մասին:

Wh-Question Web

Անհրաժեշտ է շրջանի մեջ գրել որևէ թեմա, օրինակ՝ Christmas, այնուհետև շրջանի բոլոր կողմերում հարցական բառեր գրել՝ What? Why? When? How? Where? Who? Սովորողները աշխատում են զույգերով եւ միմյանց տալիս յուրաքանչյուր հարցական բառով սկսվող հարց: Հարցերը հիմնված են նախապես ուսումնասիրված բովանդակության վրա, որը կարող է լինել տեքստի ունկնդրում, ֆիլմի դիտում և այլն:

ԳԼՈՒԽ 3. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՀՀ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 6-ՐԴ ԴՍՍԱՐԱՆԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ “SEASONS AND WEATHER” ԹԵՄԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Պետական նոր չափափորոշիչները սահմանում են սովորողի աճող դերը ինչպես նաև ստեղծագործ անհատականության ձևավորման կարևորությունը կրթական գործընթացում:

Որպես սովորողների ստեղծագործական մտածողությունը զարգացնող գործընթացի օրինակ, առաջարկում ենք դիտարկել ՀՀ հիմնական դպրոցի 6-րդ դասարանի անգլերեն լեզվի թեմատիկ պլանում ընդգրկված “Seasons and Weather” թեմայով դաս:

Դասի նպատակը՝

Կրթական ՝ «Եղանակ» թեմային առնչվող անցած լեքսիկական նյութի ակտիվացում, թեմայի շուրջ լսելու, կարդալու, խոսելու և երկխոսություն վարելու հմտությունների կատարելագործում, քերականական նյութի ամրապնդում:

Զարգացնող՝ սոցիալական հմտությունների , ինքնուրույնության, ուշադրության , համագործակցության, ստեղծագործ մտածողության զարգացում:

Դաստիարակչական՝ Վայրին և եղանակին համապատասխան ճիշտ հագնվելու ունակության ձևավորում:

Ուսումնական խնդիրներ՝

«Հագուստ» թեմայով բառապաշարի յուրացում , ամրապնդում,բանավոր խոսքի զարգացում խաղի միջոցով, քերականական նյութի ամրապնդում:

Անհրաժեշտ նյութեր, սարքավորումներ՝

Համակարգիչ, դասագիրք, սահիկաշար, վիդեո ռեսուրսներ, խաղաքարտեր, որոնք պատկերում են տարբեր եղանակներ, գնդակ:

Խթանում: Խնաթման նպատակն է առաջացնել հետաքրքրություն սովորողների մոտ:

Դասը իհարկե սկսվում է ողջույնից:

Ուսուցիչը տեղեկացնում է, որ այսօր դասի թեման թաքնված է տեսանյութում: Ցուցադրվում է անգլերեն "Weather Forecast " տեսահոլովակը "Sesame Street"

մուլտֆիլմից: Տեսանյութը դիտելուց հետո երեխաները բարձրացնում են ձեռքերը և ենթադրություններ անում, ինչպես նաև ձևակերպում են այսօրվա դասի նպատակը:

(տես՝ նկար 1)

նկար 1

Դասի բովանդակությունը:

Դասի այս մասը պարունակում է դասի ծրագրային նյութը եւ ապահովում ստեղծագործ մտածողության զարգացումը:

Գնդակի միջոցով անցկացվում է բառապաշարի հարցում: Ուսուցիչը նետում է գնդակը և արտասանում հայերեն բառը, սովորողը բառը թարգմանում է անգլերեն և գնդակը հետ է նետում: Եթե դժվարանում է պատասխանել, գնդակը նետում է հարևանին՝ «Help me , please » բառերով: Այսպիսով, նոր բառապաշարի իմացության վերաբերյալ կանոնավոր հարցումը վերածվում է զվարճալի խաղի:

Այնուհետև WH-question web առաջադրանքի միջոցով սովորողները ձևակերպում են թեմային առնչվող հարցեր, որը ստեղծագործ մտածողության զարգացման գործուն մեթոդ է: (տես՝ նկար 2)



նկար 2

Ստեղծագործական մտածողություն զարգացնող առաջադրանք է ուսումնասիրվող բառապաշարի օգտագործումը բանաստեղծության մեջ: (cinquain)



Նկար 3

Թեմային վերաբերվող բանաստեղծությունները ընթերցվում են, այնուհետև սովորողները ընտրում են լավագույնը:

Դասի վերջում ուսուցիչն առաջարկում է եղանակի մասին նախապես ուսումնասիրված երգ երգել, ուսումնասիրված թեմայի բառապաշարը վերհիշելու համար, ապա հարց է տալիս՝

T- Let`s remember what was the aim of our lesson?

Երեխաները հիշում են դասի նպատակը և որոշում, թե արդյոք հասել են դրան՝ պատասխանելով ուսուցչի հարցադրմանը:

T- I`d like to ask you- what is your mood now? Please choose your answer according to the weather. May be you are sunny, or cloudy? Windy or frosty?

Պատասխաններից հնարավոր է դառնում եզրահանգումներ անել դասի արդյունավետության վերաբերյալ:

Եզրակացություն

Այսպիսով, սույն ավարտական հետազոտական աշխատանքը կատարելու արդյունքում մեզ համար պարզ դարձավ՝

- Քսանմեկերորդ դարը բազում մարտահրավերներ է նետում: Այժմ կարևորվում է լեզվակրթությանը զուգահեռ սովորողների ստեղծագործական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, որի արդյունքում աշակերտները կլինեն լեզուն ինքնուրույն կիրառողներ,անկախ մտածողներ:
- Ստեղծագործական մտածողությունն արժեք է, որը անհրաժեշ է և , ամենակարևորը, այն հնարավոր է զարգացնել նոր մեթոդների, տեխնիկական հնարների, թեմաների, լեզվանյութի ու առաջադրանքների միջոցով, որոնք ոչ միայն կմոտիվացնեն սովորողներին ուսումնասիրել լեզուն, այլև կզարգացնեն երևակայությունը՝ գտնելու առաջադրված հարցին վերաբերող յուրօրինակ լուծումներ և հաղորդակցվել հասակակիցների հետ անգլերեն լեզվով: Կարևոր է նաև միջավայրը, որը պիտի լինի կառուցողական:
- Ուսումնասիրելով սովորողների ստեղծագործ մտածողության զարգացման առանձնահատկություններն անգլերենի հաղորդակցական ուսուցման գործընթացում՝ հանգեցինք այն մտքին, որ ստեղծագործական մտածողությունը ձևավորվում է, երբ սովորողները կանոնավոր կերպով ներգրավվում են բազմաբնույթ ուսուցողական գործընթացներում: Ուստի կարծում ենք, որ նպատակային և արդյունավետ է՝
  - Սովորողներին ներգրավվել բազմապիսի ստեղծագործ մտքի կիրառում պահանջող գործընթացներում
  - արժևորել սովորողների յուրօրինակ մոտեցումները, քաջալերել, որ լինեն ակտիվ, ազատ ու անկաշկանդ
  - ողջունել լուծումների ու պատասխանների բազմազանությունը
  - հավաստիացնել, որ դասարանն այն ապահով միջավայրն է, որտեղ կարող են ստեղծագործաբար մտածել ու սովորել:
    - Ստեղծագործական մտածողությունը բարձրագույն արժեք է, որը մոտիվացնում է երեխաներին սովորել, « լուսավորում »է ուղեղը, խթանում հուզական զարգացումը, հեշտացնում ու հետաքրքիր է

դարձնում նոր բառապաշարի և քերականական նյութի ընկալումը , և հանդիսանում է ապագայի կարևոր հմտություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Ս., Ստեղծագործական մտածողության զարգացումն անգլերենի ուսուցման գործնթացում : Երևան 2021

2. Հանրակրթական հիմնական դպրոցի անգլերեն ուսումնական առարկայի չափորոշիչ և ծրագիր 2010

3. Հայաստանի Հանրապետության Կրթության ԲԱրելավման Ծրագրի Օտար լեզուներ Ուսումնական Բնագավառի Հանրակրթության Առարկայական Չափորոշչային Վերջնարդյունքները Եվ Օրինակելի Ծրագրերը:

3. Maley A. , Peachey N. (2015) Creativity in the English language classroom, British Council

4. The Cambridge Framework for Life Competences/Cambridge University Press

5. Lucas B. Spenser E. (2017) Teaching Creative Thinking

Էլեկտրոնային Ռեսուրսներ

1. Creating a 21st Century Classroom//Teach4Learning.com

2. Bloom’s Revised Taxonomy-Colorado Collage

https://www.coloradocollege.edu/other/assessment/how-to-assess-learning/learning-outcomes/blooms-revised-taxonomy.html